ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (7 մարտի 2001 թվականի, ՀՕ-148) 42-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«**Հոդված 42. Տուժանքները**

1. Գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից սույն օրենքի դրույթների, հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի, գործունեության լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում հանձնաժողովն իրավասու է տալ խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

ա) նախազգուշացում.

բ) սույն օրենքով սահմանված տուգանքներ.

գ) լիցենզիայի գործողության կասեցում.

դ) լիցենզիայի գործողության դադարեցում։

2. Նախազգուշացումը՝ որպես տուժանք, կարող է կիրառվել սույն օրենքի դրույթների, հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի, գործունեության լիցենզիայի պայմանների ցանկացած խախտման դեպքում։

3. Սույն հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքները կիրառվում են.

ա) սույն օրենքի դրույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկից մինչև քառասունհազարապատիկի չափով.

բ) հանձնաժողովի կողմից տրված գործունեության լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից մինչև քսանհազարապատիկի չափով.

գ) հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասհազարապատիկի չափով։

4. Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված տուգանքների չափերը (մեծությունները) չեն տարածվում արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման, էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի, գազամատակարարման համակարգի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկային ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող անձանց և մինչև 10 ՄՎտ դրվածքային հզորություն ունեցող էներգիայի վերականգնվող աղբյուրների (այդ թվում՝ փոքր հիդրոէլեկտրակայաններ) կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող լիցենզավորված անձանց վրա։

5. Սույն հոդվածի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված տուգանքները սույն հոդվածի 4-րդ կետում նշված լիցենզավորված անձանց նկատմամբ կիրառվում են.

ա) սույն օրենքի դրույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև երկուհազարապատիկի չափով.

բ) հանձնաժողովի կողմից տրված գործունեության լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգ հարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով.

գ) հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հիսունապատիկից մինչև հինգ հարյուրապատիկի չափով։

6. Սույն օրենքով սահմանված տուգանքները կարող են կիրառվել, եթե լիցենզավորված անձի կողմից կատարված խախտման հետևանքով վտանգվել է կամ կարող էր վտանգվել համակարգի անվտանգությունն ու հուսալիությունը, կամ խախտվել է սպառողի իրավունքներն ու օրինական շահերը, կամ կատարված խախտումը հանգեցրել է այլ լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության պայմանների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը, կամ

խոչընդոտել է հանձնաժողովի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը, կամ կատարվել է դիտավորությամբ, կամ նախորդ խախտման պահից մեկ տարվա ընթացքում լիցենզավորված անձի կողմից կատարված երկրորդ կամ ավելի խախտումն է, կամ կրում է տևական կամ շարունակական բնույթ։

7. Սույն հոդվածի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված տուգանքների գումարները հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամկետում փոխանցվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե։

8. Լիցենզավորված անձն իրավունք ունի հանձնաժողովի նիստում արտահայտել իր կարծիքը, ներկայացնել առաջարկություններ և առարկություններ՝ կիրառվելիք տուժանքների վերաբերյալ։»։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է նպատակ ունենալով ֆինանսական տույժերի կիրառման միջոցով բարձրացնել էներգետիկայի բնագավառի լիցենզավորված ընկերությունների պատասխանատվությունը՝ կարգավորմանն առընչվող ՀՀ օրենսդրության պահանջների խախտման դեպքերում: «Էներգետիկայի մասին» գործող ՀՀ օրենքում նախատեսված տույժերը հաճախ թույլ չեն տալիս համաչափ իրավական գնահատական տալ լիցենզավորված ընկերությունների կողմից կարգավորմանն առընչվող ՀՀ օրենսդրության պահանջների խախտմանը: Նման դեպքերի համար «սակագնի նվազեցում», «լիցենզիայի կասեցում» կամ «լիցենզիայից զրկում» տույժի կիրառումը հանդիսանում է չափից դուրս խիստ և անհամաչափ պատժաչափ: Հարկ է նշել, որ թվարկված պատժամիջոցների կիրառումը, մանավանդ խոշոր ընկերությունների դեպքում, կարող է հանգեցնել ոչ միայն այդ ընկերությունների բնականոն գործունեության խաթարմանը, այլև բացասական ազդեցություն ունենալ սպառողների վրա՝ նրանց մատուցվող ծառայությունների որակի տեսանկյունից: Միևնույն ժամանակ, «նախազգուշացում» տույժը, չենթադրելով որևէ ֆինանսական պատասխանատվություն, անբավարար ներազդման միջոց է լիցենզավորված ընկերություններին համաչափ պատժի ենթարկելու և նրանց պատասխանատվության զգացողությունը համանման խախտումներ թույլ չտալու կամ դրանք արագ շտկելու համար բարձրացնելու առումով:

«Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում տուգանքների չափերը որոշելիս, հաշվի է առնվել լիցենզավորված անձանց տարեկան շրջանառությունը: Ելնելով շրջանառության չափից լիցենզավորված անձինք պայմանականորեն տարանջատվել են երկու խմբի, որոնց նկատմամբ, համաձայն նախագծի, կարող են կիրառվել օրենքի «Տուժանքները» հոդվածի համապատասխանաբար 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տուգանքները:

Լիցենզավորված անձանց նկատմամբ տույժերի կիրառման գործընթացը պետք է իրականացվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան: Համաձայն նշված օրենքի, անկախ լիցենզավորված անձի խախտումների քանակից, յուրաքանչյուր խախտման համար պետք է հարուցվի առանձին վարչական վարույթ, որի արդյունքներից ելնելով կարող են կիրառվել ինչպես նախագծով առաջարկվող, այնպես էլ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տույժերը՝ նախազգուշացում, սակագների նվազեցում, գործունեության լիցենզիայի կասեցում, գործունեության լիցենզիայից զրկում: